

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ նաև՝ Նախագծեր) ընդունումը պայմանավորված է լիազորությունների լայն շրջանակ և ինքնուրույն որոշումների կայացնելու իրավասություններ ունեցող հանրային պաշտոն գրադեցնող անձանց համար բարեվարքության ստուգման կառուցակարգերի ներդրման, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով ստանձնած հանձնառությունների իրագործման, Կառավարության կողմից ընդունված ռազմավարական փաստաթղթերով սահմանված առաջնահերթությունների կատարման անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-L որոշման (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն) գործողությունների ծրագրով նախատեսվում է լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն գրադեցնող անձանց համար բարեվարքության ուսումնասիրության պահանջի ներդրում, որը բխում է նաև Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (այսուհետ նաև՝ ԳՐԵԿՈ) «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կենտրոնական մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում) և իրավապահ մարմիններում» խորագրով ԳՐԵԿՈ-ի հինգերորդ փուլի Հայաստանի գնահատման զեկույցից (այսուհետ նաև՝ Չեկույց):

1) Հայաստանի Հանրապետությունում իրականացված օրենսդրական փոփոխությունները.

Բարեվարքության ստուգման կառուցակարգեր ՀՀ-ում ներդրվեցին դեռևս 2020 թվականի մարտի 25-ին իրականացված օրենսդրական փոփոխություններով:

Մասնավորապես, Ազգային ժողովի կողմից իրականացվեցին փոփոխություններ Պատական օրենսգիրք, Սահմանադրական դատարանի մասին, Ազգային ժողովի կանոնակարգ, սահմանադրական օրենքներում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում և հարակից օրենքներում: Իրականացված փոփոխություններով Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի մասին՝ օրենքում ներդրվեց բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգերը և սահմանվեց, որ բարեվարքության ուսումնասիրություն են անցնելու դատավորների թեկնածուները, սահմանադրական դատարանի թեկնածուները, բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուները, ՎՃՋԲԵԿ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուները և այլն:

Միաժամանակ՝ 2021-2022 թվականներին իրականացված օրենսդրական մի շարք փոփոխություններով բարեվարքության ստուգման կառուցակարգեր նախատեսվեցին Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների, Հակակոռուպցիոն դատարանի դատավորների, Գլխավոր դատախազի թեկնածուի և այլ պաշտոնատար անձանց համար:

2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվեցին մի շարք բարեփոխումներ, որոնք ուղղված են բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց բարեվարքության ամրապնդմանը:

Մասնավորապես, 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսվում է ընդլայնել այն պաշտոնատար անձանց շրջանակը, որոնք պետք է անցնեն բարեվարքության ուսումնասիրություն: Օրենսդրական փոփոխություններով նախատեսվում է, որ լայն լիազորություններ և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք ևս պետք է անցնեն բարեվարքության ուսումնասիրություն՝ ապահովելով թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձր պաշտոններում:¹

2) Բարեվարքության ստուգումը որպես բարեվարքության ապահովման մեխանիզմ.

1. Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի տեխնիկական ուղեցույցը, որը պատրաստվել է Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) կողմից Միավորված ազգերի կազմակերպության հանցավորության և արդարադատության միջտարածաշրջանային հետազոտական ինստիտուտի (UNICRI) հետ համատեղ, 50-րդ գլխում նշում է **բարեվարքության ստուգումը որպես կոռուպցիայի դեմ պայքարի առկա գործիքներից մեկը և նկարագրում է այն հետևյալ կերպ. «մեթոդ, որը նպաստում է ինչպես կոռուպցիայի կանխարգելմանը, այնպես էլ դրա համար դատական հետապնդմանը և իրեն ապացուցել է որպես կոռուպցիայի զսպման չափազանց արդյունավետ միջոց»**²:

¹ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը: ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշում:

https://file:///D:/Downloads/2023_n1871hav.2.pdf

²UNODC (2009), Technical Guide to the UNCAC, Article 50 II.4.5., https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/TechnicalGuide/09-84395_Ebook.pdf.

2. ՏՀԶԿ-ի «Հանրային հատվածում շահերի բախման կառավարում» ուղեցույցում նշվում է, որ «բարեվարքության ստուգումը կարող է հզոր մասնագիտացված գործիք լինել կոռուպցիայի բացահայտման համար»³:

3. 2000 թվականին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունեց «Պետական պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ» № R (2000) 10 հանձնարարականը: Հանձնարարականին կից պետական պաշտոնատար անձանց վարքագծի օրինակելի կանոնագիրքը նպատակ ուներ «սահմանել բարեվարքության և վարքագծի չափանիշներ, որոնք պետք է պահպանվեն պետական պաշտոնյաների կողմից, որպեսզի օգնեն նրանց համապատասխանել այդ չափանիշներին և հասարակությանը տեղեկացնել այն վարքագծի մասին, որը նա իրավունք ունի ակնկալել պետական պաշտոնյաներից» (հոդված 3): Կանոնագրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «պետական ծառայողը պարտավոր է իրեն մշտապես պահել այնպես, որ պահպանվի և ամրապնդվի հանրային վստահությունը հանրային ծառայության բարեվարքության, անկողմնակալության և արդյունավետության նկատմամբ»:

Հանձնարարականի 24-րդ հոդվածում քննարկվում է բարեվարքության ստուգումների հարցը: Այն սահմանում է, որ «պետական պաշտոնյան, որը պատասխանատու է նշանակման, առաջխաղացման կամ պաշտոնավարման համար, պետք է ապահովի, որ թեկնածուի բարեվարքության համապատասխան ստուգումներն իրականացվեն օրենքի պահանջներին համապատասխան» (կետ 1)՝ հավելելով, որ «եթե որևէ նման ստուգման արդյունքը նրա համար անորոշություն է առաջացնում» (1-ին կետ 2) «նա պետք է դիմի համապատասխան խորհրդատվության համար» (կետ 2):

Հանձնարարականի բացատրական գրության⁴ մեջ ընդգծվում է, որ «հանրային ծառայությունը պետական պաշտոնյաներից պահանջում է բարեվարքություն» և նշվում է, որ «փորձը ցույց է տալիս բարեվարքության ստուգումներ անցկացնելու կամ դրանց համապատասխան գործողություններ ձեռնարկելու կարևորությունը՝ պետական ծառայության բարեվարքության երկարատև խնդիրներից խուսափելու համար»:

4. Վենետիկի հանձնաժողովը դիտարկել է ազգային միջոցառումների երեք ենթակատեգորիա՝ (i) որոշակի պաշտոնի համար թեկնածուների «նախնական ստուգում», (ii) բարեվարքության ստուգումներ, որոնք իրականացվում են ավելի կանոնավոր կերպով (օրինակ՝

³ OECD (2005), *Managing Conflict of Interest in the Public Sector*, էջ 68 (“Integrity Testing Policy”). <https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf>.

⁴ COUNCIL OF EUROPE COMMITTEE OF MINISTERS EXPLANATORY MEMORANDUM to Recommendation Rec(2000)10 on Codes of conduct for public officials (Adopted by the Committee of Ministers on 11 May 2000, at the 106th session), <https://rm.coe.int/1680534424>.

գույքի հայտարարագիր տարեկան ներկայացնելու պարտավորություն), (iii) ստուգման լիարժեք ընթացակարգեր:

Թեկնածուների «նախնական» բարեվարքության ստուգումն իրականացվում են գնահատման միջոցով:

3) Համեմատական փորձը բարեվարքության ամրապնդմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ.

2024 թվականի մարտին հաստատված Հայաստանի գնահատման ԳՐԵԿՈ-ի 5-րդ փուլի գեկույցը (այսուհետ՝ Ձեկույց) առաջարկում է, որ Հայաստանը «պետական բարձրագույն գործառույթներ իրականացնող անձինք (PTEF) նշանակումից առաջ կամ անմիջապես հետո անցնեն բարեվարքության ստուգում՝ հնարավոր շահերի բախումները հայտնաբերելու և կառավարելու համար»: Սա ենթադրում է, որ անհրաժեշտ է ապահովել վերահսկողության մեխանիզմներ, որոնք երաշխավորում են նման ստուգումների իրականացումը ժամանակին և բավարար տեղեկատվության ձեռքբերումը՝ շահերի բախման դեպքերը հայտնաբերելու և ըստ անհրաժեշտության դրանք կառավարելու համար:

Ըստ Ձեկույցի պետական բարձրագույն գործառույթներ իրականացնող անձինք (PTEF) են հանդիսանում՝ վարչապետը, փոխվարչապետները, նախարարները, նախարարների տեղակալները, խորհրդականները և հասարակական հիմունքներով խորհրդականները:

Զնայած «Հանրային ծառայության մասին» օրենքով, ի թիվս այլնի, նախատեսվում են վարքագծի, գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման կանոններ և դրանց իրականացման մեխանիզմներ, որոնք, ի թիվս այլոց, վերաբերում է նաև վարչապետին, փոխվարչապետներին, նախարարներին, նախարարների տեղակալներին, խորհրդականներին, բայց վերոնշյալ շրջանակից դուրս են մնում հասարակական հիմունքներով խորհրդականները:

Ձեկույցում նշվում է նաև, որ հասարակական հիմունքներով խորհրդականները ներկայումս գտնվում են այսպես կոչված «գորշ գոտում»: Վերջիններս կարող են նաև խնդիրներ առաջացնել գաղտնի տեղեկությունների պոտենցիալ հասանելիության, լոբբինգի և քողարկված ազդեցության առումով:

Համապատասխանաբար, ԳՐԵԿՈ-ն առաջարկում է հստակեցնել և կարգավորել հասարակական հիմունքներով (չվարձատրվող) խորհրդականների իրավական կարգավիճակը և պարտավորությունները, որպեսզի նրանք ենթարկվեն թափանցիկության, հաշվետվողականության և բարեվարքության ամենաբարձր չափանիշներին (մասնավորապես՝ վարքագծի կանոնների, շահերի բախման կանխարգելման, գաղտնի տեղեկությունների օգտագործման և ֆինանսական բացահայտման մասով):

Հայաստանում ներկայումս PTEF-ների նշանակվելուց առաջ կամ անմիջապես հետո բարեվարքության ստուգման կառուցակարգեր առկա չեն: ԵԽ-ն իրականացրել է այս ոլորտի վերլուծություն Հայաստանի համար և առաջարկել է մի քանի մոտեցումներ:

Թեկնածուների բարեվարքության ստուգումը համեմատաբար նոր ինստիտուտ է նաև եվրոպական երկրներում, այդ իսկ պատճառով մոտեցումները բավական տարբեր են:

1. Ինքնագնահատման հարցաթերթիկի կիրառում.

Պորտուգալիայի մոդելի համաձայն՝ թեկնածուների անձնական շահերի և բարեվարքության տարրերի վերաբերյալ տեղեկությունը բացահայտվում է ներսում՝ կառավարության ձևավորման ժամանակ: Օրինակ, 2023 թվականին Պորտուգալիայի կառավարությունը հաստատել է հարցաթերթիկի ձևաչափ նախարարների և պետական քարտուղարների պաշտոնների թեկնածուների համար, որպեսզի օգնի վարչապետին (նախարարների և պետական քարտուղարների դեպքում), նախարարներին (պետական քարտուղարների դեպքում) և Հանրապետության նախագահին (կառավարության անդամների դեպքում) որշումներ կայացնելիս:

Հարցաթերթիկը ներառում է 36 հարցեր, որոնք բացահայտում են թեկնածուների անձնական շահերը: Շատ հարցեր վերաբերում են նաև նրանց ընտանիքի անդամներին: Հարցերը վերաբերում են թեկնածուների մասնագիտական կազմակերպություններին անդամակցությանը, գործունեությանը, որը կարող է առաջացնել փաստացի կամ հնարավոր շահերի բախում:

Նիդերլանդների կառավարությունը նույնպես ներդրել է հարցաթերթիկի լրացման գործիքը, որն օգտագործվում է կառավարության ձևավորման գործընթացում: Հարցերը վերաբերում են հասարակության հետ հաղորդակցությանը, բարեվարքության հետ կապված անցյալ միջադեպերին, ծանոթություններին/կապերին, որոնք կարող են վտանգ ներկայացնել թեկնածուի հեղինակության համար և այլն: Ներկայացվող պատասխանները գաղտնի են: Հարկ է նշել, սակայն, որ տրված պատասխանների արժանահավատության ստուգման ընթացակարգեր Նիդերլանդներում ներդրված չեն: Հետևաբար, կառավարություն ձևավորելիս ապավինում են այն տեղեկատվությանը, որը տրամադրվել է Թեկնածուների կողմից⁵:

2. Բարեվարքության սկրինինգի կիրառում.

Մի շարք երկրներ որպես վերահսկողության միջոց գործածում են տարբեր շրջանակների և խստության ավելի ինստիտուցիոնալ բարեվարքության սկրինինգի կառուցակարգ: **Ֆրանսիան** օգտագործում է նախնական նշանակման սկրինինգի գործընթաց միայն այն անձանց համար, ովքեր վերջին երեք տարիների ընթացքում շահութաբեր մասնավոր գործունեություն են

⁵ Ministerie van Binnenlandse Zaken en Koninkrijksrelaties, Self-assessment and risk analysis of the integrity of candidate members of government, available at <https://open.overheid.nl>, accessed on 19 June 2024

իրականացրել կամ իրականացնում: Կանխարգելման պետական մարմինը պետք է եզրակացություն տա անհամատեղելիության՝ դրական կամ վերապահումներով (շահերի բախումից խուսափելու համար քայլեր ձեռնարկելու առաջարկով և այլն) տասնհինգ օրվա ընթացքում:

Ալբանիայում թեկնածուն պետք է լրացնի և ստորագրի ինքնագնահատման ձևաթուղթ, որով նա հայտարարում է իր ընտրվելը կամ նշանակումը բացառող պատճառների (այդ թվում՝ քրեական դատվածությունը) բացակայության մասին: Այնուամենայնիվ, օրենքը սահմանում է, որ տրամադրված տեղեկությունները ստուգվում են միայն օրենքով սահմանված մարմինների կամ պաշտոնատար անձանց պահանջով, կամ առնվազն 500 քաղաքացիների դիմումի հիման վրա: Նման պահանջի դեպքում կամ ի պաշտոնե իրավասու մարմինը պահանջում է Գլխավոր դատախազությունից ստուգել տվյալները:

Անվտանգության մարմինների կողմից սկրինինգը ևս մեկ մոտեցում է: Օրինակ՝ **Լիտվայում** անձին պաշտոնում նշանակող կամ առաջադրող անձի համար պարտադիր է տեղեկատվություն պահանջել Հատուկ քննչական ծառայությունից:

3. Ինքնագնահատումը վարքագծի կանոնների համաձայն.

Որոշ եվրոպական երկրներում վարքագծի կանոնները և նմանատիպ փաստաթղթերը սահմանում են թեկնածուների հետ կապված ռիսկերի գնահատման նվազագույն պահանջներ: Օրինակ, **Բելգիայում**, մանդատն ընդունելուց և դրանից հետո, կառավարության անդամները պետք է քննարկեն մասնավոր կամ պետական ընկերություններում իրենց զբաղեցրած կառավարչական պաշտոնների զբաղեցումը, և ինքնահարցադրումներ անեն՝ արդյոք նրանք հայտնվել են շահերի պոտենցիալ բախման իրավիճակում: Այնուամենայնիվ, այս մոտեցումը չի կարող դիտարկվել որպես ամբողջական բարեվարքության ստուգման լիարժեք գործիք:

Որպես կատարած ուսումնասիրության ամփոփում՝ ԵԽ-ն նշում է, որ Հայաստանում բարեվարքության ստուգման կառուցակարգերի շրջանակի մեջ թեկնածուների ներառումն ունի մի քանի առավելություն.

- ԿԿՀ-ն ունի անհրաժեշտ փորձ/փորձագիտական կարողություններ բարեվարքության գնահատում իրականացնելու համար.

- Թեկնածուների համար հարցաթերթի/ինքնաստուգման վրա հիմնված ստուգումը նոր մոտեցումներից մեկն է եվրոպական մի շարք երկրներում և, որպես այդպիսին, պոտենցիալ կիրառելի է նաև Հայաստանում՝ պայմանով, որ տեղեկությունը ենթարկվի խաչաձև ստուգման.

- Գործող իրավական կարգավորման համատեքստում, երբ թեկնածուների համար չկան բարեվարքության հետ կապված որակավորման որոշակի պահանջներ, բարեվարքության ստուգման եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ.

- Բարեվարքության ստուգումը պետք է իրականացվի որոշ թեկնածուների առաջադրման և նշանակման համար սահմանված ժամանակահատվածներին համարժեք սեղմ ժամկետներում.

- Թեկնածուները պետք է տեղեկություն տրամադրեն ոչ միայն գույքի և եկամուտների, այլև շահերի մասին՝ համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 42-րդ հոդվածի: Բացի այդ, թեկնածուները կարող են տեղեկություն ներկայացնել՝

- Կազմակերպությունների վերաբերյալ, որոնց անդամներն են, կամ ընտանիքի անդամները, որոնք ենթակա են պետական մարմինների անմիջական վերահսկողության կամ այլ գործունեությունների.

- Պետական մարմինների հետ՝ իրենց վերաբերյալ վարչական կամ քաղաքացիական վեճերի մասին, պետական ֆինանսական կամ հարկային առավելություններից օգտվելը, որը ստացվել է թեկնածուների, նրանց ընտանիքի անդամների կամ կազմակերպությունների կողմից.

- Ցանկացած այլ փաստերի, որոնք կարող են ազդել բարեվարքության սկզբունքների պահպանման վրա.

- Գործող ընթացակարգերում պետք է սահմանել չափանիշներ, որոնք հստակ կհանգեցնեն օրինակ բացասական եզրակացության միայն շարունակական շահերի բախման հնարավորության բարձր հավանականության դեպքում: ԿԿՀ-ն պետք է գնահատի, թե արդյոք նշանակումը կլինի համահունչ 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունված Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնակարգի 28-րդ կետին:

- Դրական վերապահումով եզրակացությունը ի թիվս այլոց պետք է առաջարկի այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն՝ խուսափելու պաշտոնական լիազորությունները իրականացնելիս շահերի բախման դեպքերից (երբ հանրային պաշտոնյան այլևս հնարավորություն չունի անկողմնակալորեն իրականացնել իր պաշտոնական պարտականությունները), ինչպես նշված է Կանոնակարգի 30-րդ հոդվածում: Առաջարկված լուծում կարող է լինել, օրինակ, կազմակերպությունում մասնակցությունը դադարեցնելը, առաջարկել կանխարգելիչ միջոցառումներ խուսափելու հնարավոր կոնֆլիկտներից, որոնք կարող են առաջանալ նմանօրինակ պաշտոնի հասանելիության պայմաններում.

- Դրա հետ մեկտեղ, ներկայիս չափանիշը «լրատվամիջոցներում հրապարակումներ, որոնք կարող են ստեղծել հանրային գործունեության անկախության և անկողմնակալության վերաբերյալ խորը անվստահություն», հնարավոր չէ լիովին կիրառել PTEF-ների նկատմամբ, որոնց

անկախության և անկողմնակալության չափանիշները ավելի սահմանափակ են, քան դատավորներինը: Հետևաբար, խորհուրդ է տրվում, որ սա բացառվի PTEF-ների պաշտոնների թեկնածուների ստուգման ընթացակարգերից:

- Հաշվի առնելով առաջադրման և նշանակման գործընթացներում ժամանակային սահմանափակումները, ինչպես նաև այն փաստը, որ PTEF-ներն ունեն անկախության և անկողմնակալության չափանիշներ, որոնք տարբերվում են ներկայումս ստուգման ենթարկվող անձանցից (դատավորներից)՝ թեկնածուների բարեվարքության ստուգման որոշ տարրեր պետք է բաց թողնվի կամ պարզեցվի: Մասնավորապես, գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալների ստուգումը (սեփականության կարգավիճակի ստուգումը) կարող է իրականացվել պաշտոնավարման ընթացքում ավելի ուշ՝ անմիջական վերանայմամբ՝ սահմանափակվելով այս փուլում նրանով, թե արդյոք որևէ գույք կամ եկամտի աղբյուր կարող է շահերի բխում առաջացնել:

- Ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն կարող է հավաքվել, ի թիվս այլոց, հանրային հատվածում հովանավորչության դեպքերից խուսափելու նպատակով կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու համար:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծերով առաջարկվում է իրականացնել մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են լիազորությունների լայն շրջանակ և ինքնուրույն որոշումների կայացնելու իրավասություններ ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար մինչև համապատասխան պաշտոնում նշանակվելը կամ անմիջապես պաշտոնի նշանակվելուց հետո բարեվարքության ուսումնասիրության պարտադիր պահանջի սահմանմանը:

ԳՐԵԿՈՒ-ի Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցի շրջանակներում տրված հանձնարարականների հաշվառմամբ քննարկվող պաշտոնատար անձանց շրջանակը հանգում է հետևյալին՝ վարչապետ, փոխվարչապետներ, նախարարներ, վերջիններիս խորհրդականները (այդ թվում՝ հասարակական հիմունքներով), նախարարների տեղակալներ: Պաշտոնատար անձանց շրջանակի հաշվառմամբ առաջարկվում է Հանձնաժողովին տրամադրել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու և բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու հնարավորություն:

Առաջարկվում է բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում ներառել անձանց գույքային դրության՝ ներառյալ վերջիններիս շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերը և դրանց չեզոքացմանն ուղղված առաջարկությունները:

Հաշվի առնելով, որ առաջարկվող կարգավորումների հետապնդվող նպատակը Նախագծերով առաջարկվող պաշտոնատար անձանց մոտ բարեվարքության ռիսկերի կանխարգելումն է, Կոռուպցիայի կանխարգեման հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները չեն կրելու հրապարակային բնույթ:

Նախագծերով նախատեսվում է, որ վարչապետի, նախարարների և փոխվարչապետների, վերջիններիս խորհրդականների (ներառյալ՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների համար) ինչպես նաև նախարարների տեղակալների կողմից պաշտոնի ստանձնման հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացնի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում կտրամադրվի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն: Ուսումնասիրությունը ներառում է վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, վերջիններիս խորհրդականների (ներառյալ՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների համար), նախարարների տեղակալների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների պաշտոնական պարտականությունների ստանձնման հայտարարագրերի վերլուծություն՝ համադրված, առկայության դեպքում, նույն անձանց նախորդ հայտարարագրերի տվյալների հետ:

Նախագծերով առաջարկվում է կարգավորել նաև այն իրավիճակները, երբ համապատասխան պաշտոնատար անձինք օրենքով սահմանված կարգով ազատված են պաշտոնական պարտականությունների ստանձնման հայտարարագրեր ներկայացնելու պարտականությունից: Նման դեպքերում նախագծերով առաջարկվում է սահմանել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունը իրականացվում է նախկինում տրված հայտարարագրերի հիման վրա:

Իրականացված բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների հիման վրա նախատեսվում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կտրամադրի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն: Եզրակացությունը ներառելու է անձանց գույքային դրության և բարեվարքության համակարգի տարրերի պահպանման տեսանկյունից հնարավոր ռիսկերը և դրանց չեզոքացմանն ուղղված առաջարկությունները:

3. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության

հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր

Նախագծերի ընդունումը բխում է Հակակոռուպցիոն ռազմավարության 2-րդ հավելվածով սահմանված գործողությունների ծրագրի 1.12-րդ և 1.14-րդ գործողություններից:

4. Նախագծերի ընդունման դեպքում լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության մասին

Նախագծերի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն առկա չէ:

5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված մարմինները կամ անձինք

Նախագծերը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ներդնել բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգեր վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, նրանց խորհրդականների, ինչպես նաև հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարների տեղակալների համար: Բարեվարքության ուսումնասիրության պարտադիր գործընթացի ներդրումը կնպաստի պետական համակարգի նկատմամբ վստահության և թափանցիկության բարձրացմանը:

Միաժամանակ, հետևողականորեն իրականացնելով բարեվարքության ստուգումներ, հնարավոր կլինի նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, ինչն ուղղակիորեն կբարձրացնի հանրային վստահությունը պետական պաշտոնատար անձանց նկատմամբ: Բարեվարքության ուսումնասիրությունը կավելացնի հանրային պաշտոններում նշանակվող անձանց հաշվետվողականությունը և հանրային վերահսկողության մակարդակը: